

**Լեհական մամուլը Հայոց ցեղասպանության մասին 1991-2018 թթ.**

*Հենրի Մասինյան*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-201>

*Հանգուցային բառեր. հայեր, Թուրքիա, Լեհաստան, Եղեռն, կոտորած, ամսագիր, ճանաչում, դատապարտում*

**Նախաբան**

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան Թուրքիայի կողմից հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ցեղասպանությունը ժամանակակից միջազգային քաղաքականության ամենից շատ քննարկված թեմաներից է: Այդ հանցագործության միջազգային դատապարտման և նմանատիպ ոճիրների կանխարգելման գործում կարևոր դեր են կատարում արդարամիտ միջազգային հանրությունն ու համաշխարհային մամուլը: Մույն ուսումնասիրության թեման արդիական է, քանի որ Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը դեռևս չի ավարտվել, գլխավոր հանցագործ Թուրքիան առ այսօր չի ճանաչել իր իրականացրած ոճիրը, և Հայ դատի պահանջատիրությունը մնում է հրատապ խնդիր:

Հոդվածի գիտական նորույթը թեմայի չուսումնասիրվածությունն է հայ պատմագրության մեջ: Մույն աշխատանքում առաջին անգամ ներկայացվում է 1991-2018 թվականներին Հայոց ցեղասպանության լուսաբանումը լեհական մամուլում: Հետազոտության համար ընտրվել են լեհական բարձր վարկանիշ ու համարում ունեցող պարբերականները:

1990-ական թվականների սկզբին Լեհաստանը կոմունիստական վարչակարգի երկրից անցում էր կատարում ժողովրդավարական կառավարման: Այս շրջանում լեհական մամուլը հետզհետե ավելի հաճախակի էր անդրադառնում Հայոց ցեղասպանությանը՝ հաճախ սեփական երկրի պատմության ողբերգական էջերի հետ համեմատության համատեքստում: Լեհական պարբերականներում հոդվածներ էին հրապարակվում Հայոց ցեղասպանության դատապարտման, նմանատիպ հանցագործությունների կանխարգելման, հայերի և լեհերի բախտորոշ անցյալի ողբերգական իրադարձությունների և երկու ժողովուրդների ճակատագրերի ընդհանրությունների վերաբերյալ:

**Լեհական մամուլի հրապարակումները Հայոց ցեղասպանության մասին:**

**Լեհական Մեմֆի դատապարտող բանաձևի ընդունումը**

Հայոց Մեծ Եղեռնի մասին առաջին հրապարակումները լեհական մամուլում լույս տեսան 1990-ական թվականների սկզբին: 1991 թ. ապրիլի 17-ին «Գազետա Վիբոռչա» օրաթերթում հրատարակված «Հույները, թուրքերը, հայերը և Կիպրոսը» հոդվածում տեղեկություններ են հրապարակվում այն

մասին, որ Հունաստանի խորհրդարանի 300 անդամներից 152-ը հանդես են եկել նախաձեռնությամբ՝ Օսմանյան Թուրքիայում 1915-1922 թթ. հայերի նկատմամբ իրականացված ջարդերը ցեղասպանություն ճանաչելու վերաբերյալ [6]: Պատգամավորներն առաջարկում են ճանաչել այլ ազգերի նկատմամբ թուրքերի իրականացրած բոլոր ոճիրները, կոչ անում ՄԱԿ-ին՝ պատժամիջոցներ սահմանել Թուրքիայի նկատմամբ և վերջ դնել Կիպրոսի անօրինական բռնազավթմանը: Հաջորդիվ համառոտ ակնարկ է արվում հայերի կոտորածների վերաբերյալ, նշվում, որ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում թուրքերի կողմից սպանվել է ավելի քան մեկ միլիոն հայ, բայց պաշտոնական Թուրքիան ցայսօր չի ճանաչում իր մեղքը [6]: Լեհական մամուլի մի շարք հրապարակումներում տեղեկություններ են զետեղվում Հայոց Ցեղասպանության 80-ամյա տարելիցի մասին:

«Գազետա Վիբորչա» թերթի՝ 1995 թ. ապրիլի 25-ի համարում լույս տեսած «Հայկական կոտորածի տարելիցը» հոդվածում անդրադարձ է կատարվում Երևանում նախորդ օրը տեղի ունեցած սգո երթին՝ ի հիշատակ 80 տարի առաջ տեղի ունեցած անմեղ զոհերի հիշատակի: Թերթը միաժամանակ արձանագրում է, որ Թուրքիան չի ճանաչում Հայոց Ցեղասպանությունը՝ շարունակելով ավանդական ժխտողական քաղաքականությանը [15]:

«Տեչպոսպոլիտա» օրաթերթի՝ 1995 թ. ապրիլի 29-ի՝ «Ո՞վ է այսօր հիշում հայկական կոտորածները» վերտառությամբ հոդվածում, լրագրող Գժեգոժ Գուրինին գրում է, որ մինչ հրեաների կոտորածները, հայկական արհավիրքն անհասկանալի էր աշխարհին, և ինչպես էր հայ ժողովուրդը միայնակ մնացել թուրք դահիճների դեմ [29]: Ըստ հեղինակի, հայոց եղեռնագործության մասին սուկ արևմտաեվրոպական մտավորականներն էին իրենց ձայնը բարձրացնում: Նրանցից ֆրանսիացի ականավոր գրող Անատոլ Ֆրանսի կարծիքով, Հայաստանը «սպանվում է միայն այն պատճառով, որ Եվրոպայի քույրն է Ասիայում, իսկ Եվրոպան հրաժարվում է այդ հարազատությունից՝ լվանալով ձեռքերը» [29]: Մեջբերելով Հիտլերի համանուն խոսքերը 1939 թ. Լեհաստանի վրա հարձակվելուց առաջ՝ հեղինակը հռետորական հարց է ուղղում հիշողության կորստով տառապող քաղաքակիրթ աշխարհին՝ «Ո՞վ է այսօր հիշում հայերի սպանդի մասին» [29]:

«Գազետա Վիբորչա»-ի 1995 թ. մայիսի 2-ի՝ «Հայերի ջարդերի 80-րդ տարելիցը» հոդվածում ներկայացվում է «աշխարհի պատմության մեջ ամենադաժան» ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին Կրակովի Դոմինիկյան եկեղեցում հայ կաթոլիկ քահանա Յուզեֆ Կովալչիկի ձեռամբ մատուցված պատարագը [4]: Այնուհետև համառոտ պատմվում է մեկուկես միլիոն անմեղ հայերի կոտորածը օսմանյան թուրքերի կողմից, որն իրականացվեց առանց տարիքի և սեռի խտրության:

Պայմանավորված Լեհաստանում ՀՀ դեսպանության պաշտոնական բացմամբ և Հայոց ցեղասպանության հարցում պաշտոնական Երևանի ար-

տաքին քաղաքական կուրսի փոփոխություններով՝ 1998 թվականից Եղեռնի թեման ավելի հաճախ է հայտնվում լեհական պարբերականներում: 1998 թ. ապրիլի 24-ին լույս է տեսնում «Մոռացված ցեղասպանություն» հոդվածը, որտեղ ներկայացվում է «20-րդ դարի առաջին ցեղասպանությունը» թուրքական դահիճներ, էնվերի, Թալեաթի և Ջեմալի կողմից կազմակերպված սպանող քրիստոնյա հայ ժողովրդի դեմ [23]: Հեղինակն ընդգծում է, որ կոտորածների կազմակերպիչները ցանկանում էին Թուրքիայում ստեղծել էթնիկապես մաքուր պետություն, իսկ հայերի նկատմամբ առավել ընդգծված աստվությունը պայմանավորված էր առաջին աշխարհամարտի ժամանակ հայ ժողովրդի կողմից Ռուսական կայսրությանը ցուցաբերած աջակցությամբ:

1999 թ. հունիսի 15-ին լույս տեսած «Չորս էկումենիկ ժամ Հայաստանում» հոդվածում ներկայացվում է Հռոմի Հովհաննես-Պողոս Երկրորդ պապի անսպասելի այցը Հայաստան, որ տևել է ընդամենը չորս ժամ: Պատճառը Ամենայն հայոց կաթողիկոս Գաբրեզին Ա-ին տեսակցելն էր, ով ծանր հիվանդ էր կոկորդի քաղցկեղով: Ըստ հեղինակի՝ հայերն այս այցի ընթացքում հույս էին տածում բարձրացնել Օսմանյան Թուրքիայի կողմից կազմակերպված հայերի կոտորածների դատապարտման հարցը [5]:

2001 թ. սեպտեմբերի 6-ի՝ «Ցեղասպանություն, թե՛ ոչ» հոդվածն սկսվում է Բեռնի դատարանի առջև կանգնած 17 հոգու ներկայացմամբ, որ մեղադրվում էին «ցեղասպանություն» հանցագործության ժխտման, մեղմացման կամ արդարացման համար [10]: Այստեղ «ցեղասպանություն» եզրույթի տակ հասկացվում էին այն իրադարձությունները, որ կատարվել էին օսմանյան թուրքերի կողմից 1915-1917 թթ. էթնիկ հայ բնակչության նկատմամբ: Այնուհետև ներկայացվում է Շվեյցարիայում հայ-թուրքական հակամարտությունն այդ հարցի իրավացիության շուրջ. շվեյցարահայերը պահանջում էին Շվեյցարիայի խորհրդարանից ընդունել Ցեղասպանությունը դատապարտող բանաձև, մինչդեռ տեղի թուրքական միությունները խնդրագրով խորհրդարանին տեղեկացնում էին, թե Ցեղասպանության մասին խոսելը խեղաթյուրում է իրականությունը, քանի որ Օսմանյան պետությունը երբեք չի ձգտել բնաջնջել հայերին [10]: «Գազետա Վիբորչա»-ի թղթակից Կոնստանտին Գեբերտի «Խաղեր հիշողության հետ» հոդվածում հեղինակը մեջբերում է Ադոլֆ Հիտլերի «Իսկ ո՞վ է այսօր հիշում հայերին» արտահայտությունը՝ կապված հրեական հարցի՝ ֆաշիստական լուծման վերաբերյալ հնարավոր միջազգային արձագանքների հետ [7]: Գեբերտն այս հոդվածում մերկացնում է եվրոպական տերությունների երեսպաշտ քաղաքականությունը՝ մեղադրելով հայկական հարցը աշխարհաքաղաքական շահերին ծառայեցնելու մեջ: Այնուհետև փաստում է, որ միայն 1970-ական թվականների «ԱՍԱԼԱ» կազմակերպության հայ մարտիկների (ըստ հեղինակի՝ «ահաբեկիչներ») գործունեության շնորհիվ աշխարհը կրկին հիշեց այդ ահասարսուռ միջազգային հան-

ցագործության՝ անպատիժ մնացած լինելու մասին: Այլապես կարող էր պարզվել, որ «Հիտլերը ճիշտ էր այդ հարցում, անգամ՝ գերեզմանից այն կողմ» [7]: Անդրադարձալով հայ-հրեական հարաբերություններին՝ հեղինակը եզրակացնում է, որ հայերն ավելի շատ հակված են մտերմության պաղեստինցիներին հետ, իսկ հրեաները, Թուրքիայի հետ ունեցած փոխադարձ շահերով պայմանավորված, ոչ միայն զերծ մնացին դպրոցական դասագրքերում Հայոց ցեղասպանությունը ներդնելու ծրագրից, այլև չդատապարտեցին Հայոց ցեղասպանությունը: Ավելին, ըստ թերթի, «հրեական համայնքը Թուրքիայում պաշտպանում է պատմության թուրքական տեսլականը աշխարհի կարծիքի դեմ» [7]:

Լեհական «Պոլիտիկա» թերթի 2002 թ. հուլիսի 13-ի՝ «Հիշողության վերք» հոդվածում ներկայացվում է հարցազրույց «Արարատ» ֆիլմի ռեժիսոր Ատոմ Էգոյանի հետ: Հարցազրույցի հիմնական թեման թեև ֆիլմն էր, բայց հստակ ուղերձ ուներ, ըստ որի՝ Հայոց ցեղասպանությունը տեղի ունեցավ վարագույրների ետևում՝ քաղաքակիրթ աշխարհի լուռ մեղսակցությամբ [25]:

### **Լեհական մամուլը Հայոց ցեղասպանության մասին Մեյմի դատապարտող բանաձևի ընդունումից հետո**

2005 թ. ապրիլի 19-ի Լեհաստանի Մեյմի միաձայն որոշմամբ Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևի ընդունումը ազդակ հանդիսացավ Օսմանյան Թուրքիայի կողմից առաջին աշխարհամարտի տարիներին իրականացված հայերի Ցեղասպանության խնդրին լայնորեն անդրադառնալու համար: Լայնածավալ հոդվածներ տպագրվեցին ոչ միայն կենտրոնական «Ժեչպոսպոլիտա» և «Գազետա Վիբորչա» թերթերում, այլև տեղական և քաղաքային մամուլում: Հոդվածների վերնագրերն արդեն իսկ կանխանշում էին բովանդակությունը. «Ժամանակը բուժում է վերքերը, հիշողությունը մնում է» [28], «Հանցագործությունը պետք է ճանաչվի» [34], «20-րդ դարի առաջին ցեղասպանությունը» [13], «Կան զոհեր, մեղավորներ չկան» [37], «Հայերի հիշատակին» [30], «Հայկական ջարդերի տարելիցը» [16], «Հայ-թուրքական հաշիվները պատմության հետ» [19], «Ո՞վ է վախենում հայոց պատմությունից» [8], «Ի հիշատակ կոտորված հայերի» [11], «Սպանված հայերի հիշատակին» [3] և այլն: Գրեթե բոլոր հոդվածներում նշվում էր, որ Օսմանյան Թուրքիայի կողմից առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, նախապես ծրագրված էթնիկ գտումների նպատակով, կոտորվել են քրիստոնյա հայեր: Հեղինակները, Թուրքիային և ամբողջ աշխարհին դիմելով, հորդորում էին առերեսվել պատմական ճշմարտությանը և ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

«Գազետա Վիբորչա» թերթին տված լայնածավալ հարցազրույցում «20-րդ դարի առաջին հոլոքոստը» գրքի հեղինակ Գեօրգ Կուլսարչիկը նշում է, որ թուրքերն օգտվեցին առաջին համաշխարհային պատերազմի արդյուն-

քում ստեղծված միջազգային քառսից և փորձեցին վերջնականապես վերացնել «հայկական հարցը» նպատակադրվելով կյանքի կոչել զուտ թյուրքական պետություն ունենալու գաղափարը: Կուխարչիկը հաստատում է, որ եվրոպական հզոր տերությունները, այդ թվում՝ Գերմանիան, ոչնչով չէին խոչընդոտում թյուրքական հանցավոր ծրագրի իրականացմանը: Այս հանգամանքն էր, որ հող նախապատրաստեց Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հրեաների հոլոքոստի իրականացման համար [13]:

Լեհական մամուլն անդրադարձավ նաև Լեհաստանի Հանրապետության նախկին նախագահ, Նոբելյան մրցանակի դափնեկիր Լեխ Վալենսայի՝ Հայաստան կատարած այցին՝ Հայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցին նվիրված համաժողովին մասնակցելու առնչությամբ: «Ժեչպոսպովիտա»-ի 2005 թ. ապրիլի 22-ի «Հանցագործությունը պետք է ճանաչվի» հոդվածը մեջբերում է Վալենսայի խոսքերը. «Այն ժամանակ, եթե Արևմտյան տերությունները մեղադրեին Թուրքիային և ձեռնարկեին կոնկրետ քայլեր, ապա այդ ողբերգական դեպքերը տեղի չէին ունենա: Իսկ այժմ պիտի ճանաչել պատմական ճշմարտությունը և հարգել պատմական արդարությունը» [34]: Այնուհետև ներկայացվում է ժամանակակից լեհահայ համայնքի երևելի դեմքերից Յան Աբգարովիչի խոսքերը. «Եթե Թուրքիան ցանկանում է դառնալ եվրոպական ընտանիքի մի մասը, ապա պետք է ընդունի այդ աշխարհամասի կանոնները, որոնցից մեկն էլ պատմական արդարությանն առերեսվելն է» [34]:

Հետաքրքրական են նաև գերմանական «Die zeit» և «Suddeutsche Zeitung» պարբերականներից լեհական «Ֆորում»-ում թարգմանաբար ներկայացված «Առաջին հոլոքոստը» և «Թաքնված անուն» հոդվածները [1, 84]: Դրանք կարևոր են հատկապես այն առումով, որ բացի Հայոց ցեղասպանության փաստերն ու դրվագները ներկայացնելը, հաստատվում է Գերմանիայի մեղսակցությունն այդ իրադարձություններին: Պարբերականներում մեջբերված է 1915 թ. Թուրքիայում Գերմանիայի դեսպան Պաուլ Վոլֆ-Մետերնիխի նամակը, որտեղ վերջինս նշում է, թե «գերմանացիների միակ նպատակը մինչ պատերազմի ավարտը Թուրքիային իրենց կողմում պահելն էր, առանց հաշվի առնելու՝ հայերը կգոհվեն, թե՛ ոչ» [1, 84]:

«Գազետա Վիբորչա»-ի՝ 2005 թ. սեպտեմբերի 23-ի համարում տպագրվեց Վարշավայի Արևելյան ուսումնասիրությունների կենտրոնի թյուրքական բաժնի վարիչ Ադամ Բալցերի «Հայ-թյուրքական հաշիվները պատմության հետ» ընդարձակ հոդվածը, որտեղ հեղինակը ներկայացնում է Հայոց ցեղասպանության վերաբերյալ ինչպես հայ և թուրք, այնպես էլ բրիտանացի, ամերիկացի և գերմանացի պատմաբանների տեսակետները [19]: Քննադատելով պաշտոնական Անկարայի տեսակետը՝ հեղինակը նշում է, որ, իսկապես, 1915 թ. տեղի է ունեցել հայերի ցեղասպանություն: Ըստ հեղինակի, եթե անգամ անկախ և անաչառ պատմաբանները փորձեն քննել պատմական իրա-

դարձությունները, ապա ոչինչ չեն կարող հայտնաբերել թուրքական արխիվներում, որովհետև Թուրքիայի կառավարությունը միտումնավոր ոչնչացրել է բոլոր վկայությունները: Մինևույն ժամանակ, Բալցերը քննադատաբար է վերաբերվում նաև հայկական աղբյուրներին՝ կասկածի տակ դնելով գոհերի քանակի ու ընդհանրապես Օսմանյան Թուրքիայի հայ բնակչության թվակազմի վերաբերյալ տվյալները: Համաձայնելով դեպքերը «ցեղասպանություն» որակելու հետ՝ նա համոզմունք է հայտնում, որ միայն հրեաների դեմ իրականացված ոճիրն է համապատասխանում «հոլոքոստ» անվանմանը: Ընդ որում, հեղինակը պնդում է, որ հայերը ռուսական արշավանքի ժամանակ վրեժ են լուծել մահմեդականներից, և այդ հանգամանքը ևս պիտի մատնանշվի, եթե ոչ «ցեղասպանություն», ապա գոնե որպես «պատերազմական ոճիր»:

Հոդվածի վերջում անդրադարձ է կատարվում Հայաստանում և Թուրքիայում տիրող հանրային տրամադրություններին, Եվրամիության կողմից Թուրքիային անդամագրվելու հարցում ներկայացված նախապայմաններին: Հեղինակն արձանագրում է, որ միջազգային հանրությունը և ԵՄ-ն չեն ցանկանում միջնորդ դառնալ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում: Ամփոփելով հոդվածը՝ լեհ հետազոտողը ենթադրում է, որ երկու ժողովուրդների հաշտեցման ճանապարհը շատ երկար է լինելու [19]:

«Պոլիտիկա» ամսագրի 2010 թ. մարտի 12-ի՝ «Քչերի կողմից դատապարտված հայերի սպանող» հոդվածն սկսվում է մեկ ձայնի տարբերությամբ Եվեդիայի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևի ընդունումը ներկայացնելով, որի արդյունքում, ըստ հեղինակ Ենջեյ Վինիեցկու, Եվեդիան միացավ քսան երկրից և յոթ միջազգային կազմակերպություններից բաղկացած այն համեստ խմբին, որ մեղադրում է Թուրքիային առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հարյուր հազարավոր հայերի սպանողի մեջ [26]: Հիշեցնելով, որ 2005 թվականից այդ խմբի մաս է կազմում Լեհաստանը, հեղինակը նշում է, որ այդ ոճիրը չի ճանաչվել աշխարհի շատ պետությունների կողմից, այդ թվում՝ Իսրայելի, Միացյալ Նահանգների, ԵՄ անդամ երկրների մեծ մասի, ամբողջ Աֆրիկա և Օվկիանիա մայրցամաքների, բացառությամբ Լիբանանի, նաև ողջ Ասիա մայրցամաքի երկրների [26]: Հոդվածում ներկայացվում է, որ պաշտոնական Թուրքիան թեպետ ընդունում է, որ հազարավոր մարդիկ են զոհվել, սակայն ժխտում է կանխամտածված սպանության մեղադրանքները՝ որպես հիմնավորում բերելով պատերազմական իրավիճակից բխած հանգամանքները: Ավելին՝ նմանատիպ հարցերի քննարկումը բացառելու համար Թուրքիայի քրեական օրենսգրքում ավելացվել է 301-րդ հոդվածը, որ պատիժ է նախատեսում թրքությունը վիրավորելու համար: Նման մեղադրանքներով բռնաճնշումների են ենթարկվում և կալանավորվում բոլոր նրանք, ովքեր հանդգնում են թուրքերին մեղադրել հայերի կոտորածները կազմակերպելու համար: Մեղադրյալների թվում է Նոբելյան մրցանակի դափնեկիր, թուրք գրող Օրհան

Փամուկը [26]: Հողվածում հեղինակը վերլուծում է նաև թուրք-շվեդա-ամերիկյան հարաբերությունները՝ կապված Շվեդիայի Ռիկստագի ընդունած բանաձևի հետ: Հեղինակը եզրակացնում է, որ բազմաթիվ երկրներ չեն հետևում Շվեդիայի օրինակին քաղաքական դրդապատճառներով, իրենց դիրքորոշումը հիմնավորելով, թե նման հարցերը պետք է քննարկվեն պատմաբանների կողմից: Մինչդեռ փորձագետների մեծ մասը հաստատում է, որ այդ իրադարձությունները ցեղասպանական գործողություններ են եղել, և միջազգային հանրության կողմից հաստատուն արձագանքի բացակայությունը հաջորդ տասնամյակների ընթացքում բազմաթիվ նմանատիպ ողբերգությունների պատճառ է դարձել [26]:

«Պոլիտիկա» թերթի 2010 թ. մայիսի 20-ի՝ «Ցեղասպանություն՝ դժվար բառ» հոդվածում քննարկվում է ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններում առաջացած լարվածությունը՝ կապված Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի հետ: ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ընդունած բանաձևը, որով Օսմանյան Թուրքիայում 1915-1923 թթ. 1,5 միլիոն հայերի նկատմամբ իրականացված գործողությունները ճանաչվեցին որպես «ցեղասպանություն», այնուհետև նախագահ Օբամայի կողմից այդ ողբերգությունը «20-րդ դարի մեծագույն սարսափներից մեկը» անվանելը (թեպետ չարտաբերվեց «ցեղասպանություն» բառը) անջրպետ էր առաջացրել թուրք-ամերիկյան հարաբերություններում: Դրա քաղաքական և ռազմական հնարավոր հետևանքների վերլուծությունը ներկայացնում է Պիտեր Չալսակին [24]: Նա մեջբերում է Թուրքիայի քաղաքական վերնախավի սպառնալիքները Կոնգրեսի դատապարտող բանաձևի ընդունման պարագայում թուրք-ամերիկյան համագործակցությունը Աֆղանստանում դադարեցնելու, ամերիկացիներին Ինջիրլիքում գտնվող թուրքական ավիաբազան օգտագործելուց զրկելու վերաբերյալ, որ կլիտջնդոտեր ամերիկյան զորքերի դուրսբերումը Աֆղանստանից: Իր հերթին վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդոհանն էլ սպառնացել է վտարել Թուրքիայում ապրող 170,000 հայերից 100,000-ին, որոնք Թուրքիայի քաղաքացիություն չունենին [24]:

Ավելի վաղ՝ 2010 թ. մարտի 18-ին, «Թուրքիայի վարչապետը սպառնում է արտաքսել 100 հազար հայերի» վերնագրով հոդված էր հրապարակել «Ժեշ-պոսպոլիտա» թերթը [31]: Ծարունակելով շեշտադրումներ անել ոճրի դատապարտման բարոյական կողմի վրա՝ թերթը նշում է, որ դեռևս 1987 թ. Եվրախորհրդարանի ընդունած բանաձևը սահմանել էր, որ Թուրքիայի դեմ ոչ մի քաղաքական, իրավական կամ նյութական պահանջ չէր կարող առաջանալ այդ պատմական իրադարձությունը որպես ցեղասպանության ակտ ճանաչելու արդյունքում, ուստի խոսքն առաջին հերթին բարոյական է [24]: Անդրադարձ է կատարվում նաև Թուրքիայում առկա տաբուին (հողվածի նախնական վերնագիրը «Թուրքական տաբու» է)՝ ուղղված ցանկացած այլախոհության, ովքեր կհանդգնեին այլ գնահատական տալ այդ իրադարձություններ-

րին: Իսկ տարուի պատճառը, ըստ թուրք պատմաբան Հալիլ Բերքթայի, թուրքական հանրապետության վերաբերյալ անբասիր տեսության առասպելն է, համաձայն որի՝ այն եղել է «կատարելության, անաղարտության և առաքինության մարմնացում», որտեղ բացառված են նման հանցագործությունները [24]:

2005 թ. հաջորդող տարիներին նույնպես լեհական մամուլում պարբերաբար գետնեղվում էին Հայոց ցեղասպանությանը նվիրված հրապարակումներ, հիմնականում՝ ապրիլքսանչորսյան տարելիցների և այլ երկրների կողմից դատապարտող բանաձևեր ընդունելու առնչությամբ: Հատկապես ակտիվ հրապարակումներ եղան Եղեռնի հարյուրամյա տարելիցի կապակցությամբ՝ «Հիշում ենք հայերի սպանողը» [21], «Դժվար բառ՝ «L»-ով (լեհ.՝ «ludobójstwo» - ցեղասպանություն) սկսվող» [18], «Հիշում ենք հայերի ողբերգության մասին» [12], «Հեռվից դեպի Արարատ» [23], «Հանցագործություն հանուն քաղաքականության» [27], «Հայերի կոտորածը» [17], «Հայերի հիշատակին» [9], «Սպանված հայերի տարելիցը» [20], «Թուրքիա, ընդունի՛ր» [35], «Հայերի տրիումֆը» [33], «Հայերի կոտորածը ողջ մարդկության խնդիրն է» [32] և այլն: Եթե 1990-ական թվականներին և 2000-ականների սկզբին լեհական մամուլում հարցը քննվում էր հիմնականում բարոյական տեսանկյունից, ապա այս շրջանի հողվածներում ևս ակնհայտորեն նկատում ենք համայն քաղաքակիրթ աշխարհին ուղղված կոչն ու պահանջը պատմական եղելությունը ճիշտ գնահատական տալու վերաբերյալ:

2016 թ. «Ժեչպոսպոլիտա» թերթում հրապարակվեց «20-րդ դար. առաջին մերօրյա ցեղասպանությունը» հոդվածը, որտեղ Հայոց ցեղասպանությունը ներկայացվում է որպես նորագույն պատմության մեջ օտար պետության կառույցների կողմից համակարգված և անխիղճ ձևով մի ողջ ժողովրդի սպանդի առաջին փորձ [36]: Հոդվածագիր Կաթինիեթ Յաշինսկին հակիրճ ներկայացնում է Վանա և Սևան լճերով ու Արարատ լեռով հայտնի ծաղկուն հայկական պետականության պատմությունը՝ սկսած մ. թ. ա. 2-րդ հազարամյակից: Այնուհետև ներկայացնում է թուրքերի կողմից գրավվելը 14-րդ դարում, հասնում մինչ 20-րդ դար, վերլուծում երիտթուրքերի քաղաքականությունն ու դաժան հաշվեհարդարը ժողովրդավարացման նրանց խոստումներին հավատացած հայ ժողովրդի նկատմամբ՝ ծայրագույն դաժանությամբ [36]:

Նույն թվականին լեհական «Ֆորում» երկշաբաթերթը հրապարակեց հարցազրույց հայտնի թուրք մտավորական, Նոբելյան մրցանակի դափնեկիր Օրհան Փամուկի հետ: «Թուրքիայի մասին. հույսը ձայնի մեջ» հոդվածում թուրք գրողը ներկայացնում է իր գործունեությունը, որի պատճառով տարագրվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ և չի կարող վերադառնալ Թուրքիա: Նա հույս է հայտնում, որ մահմեդականությունը հնարավոր է համատեղել ժողովրդավարության հետ. «Թուրքիան պետք է առերեսվի պատմական եղելությունը՝ ճանաչելով սեփական պատմությունն ու պատմական արդարությունը», իր խոսքն ամփոփում է Փամուկը [2]:



2018 թ. Լեհաստանի «Իրավունք և արդարություն» կուսակցությունը հանդես եկավ օրենսդրական նախաձեռնությամբ, որով առաջարկում էր լրացնել «Ազգային հիշողության ինստիտուտի մասին» օրենքը, մասնավորապես՝ «Լեհաստանի և լեհ ազգի բարի անունը» պաշտպանելու նպատակով արգելել գործածել «լեհական համակենտրոնացման ճամբարներ» արտահայտությունը [14]: Այս օրենքի գործածությունը, որ որոշակի լարվածություն էր հարուցել լեհ-հրեական և լեհ-ուկրաինական հարաբերություններում, հանդես էր բերել նաև լեհահայերի ակտիվությունը՝ ի աջակցություն Հայոց ցեղասպանության ժխտման դեմ օրենքի օրինագծի ընդունման: Թեպետ նման օրենք չընդունվեց, այդուհանդերձ, լեհական մամուլը պարբերաբար անդրադարձավ նաև Հայոց ցեղասպանության խնդրին՝ պահպանելով նախկինում հնչած հիմնական շեշտադրումները:

### **Եզրակացություն**

Լեհական մամուլը 1990-2018 թվականներին Հայոց ցեղասպանության մասին հրապարակումներում արտահայտում է համակրանք և համերաշխություն հայ ժողովրդի նկատմամբ: Այս համատեքստում նկատելի է դիրքորոշման որոշակի տեղաշարժ՝ կապված Լեհաստանի քաղաքական և հանրային սրամտադրությունների փոփոխությունների հետ: Եթե 1990-ական թվականներին լեհական մամուլը գրում է գերազանցապես Հայոց ցեղասպանության ճանաչման բարոյական կողմի մասին, ապա 2000-ական թվականներին, կապված 2005 թ. Լեհաստանի Սեյմի՝ Եղեռնը դատապարտող բանաձևի ընդունման հետ, տպագրվող հոդվածները կրում են առավել սուր և քննադատական բնույթ: Դրանք կոչ են անում միջազգային հանրությանը ճնշումներ գործադրել Թուրքիայի վրա պատմական արդարությունը ճանաչելու թելադրանքով: Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցի կապակցությամբ լույս տեսած մեծաթիվ հրապարակումներում առավել մանրամասն ներկայացվում և վերլուծվում է Ցեղասպանության խնդիրը հայ-թուրքական արդի հարաբերությունների համատեքստում:

**DOI:** <https://doi.org/10.58726/27382915-2023.1-201>

### **Գրականություն**

1. ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, Եվրոպայի երկրների վարչություն, երկկողմ հարաբերությունների երկրորդ եվրոպական բաժին, ցուցակ 11, գործ № 25, 197 էջ:
2. Forum: Orham Pamuk. O Turcji z nadzieją w głosie, 2016.
3. Gazeta Wyborcza Rzeszów: Pamięci zamordowanych Ormian, 13.11.2005.
4. Gazeta Wyborcza: 80 rocznica rzezi ormian, 02.05.1995.

5. Gazeta Wyborcza: Cztery ekumeniczne godziny w Armenii, 15.06.1999.
6. Gazeta Wyborcza: Grecy, Turcy, Ormianie i Cypr, 17.04.1991.
7. Gazeta Wyborcza: Gry z pamięcią, 20.02.2002.
8. Gazeta Wyborcza: Ku pamięci Ormian, 24.04.2015.
9. Gazeta Wyborcza: Ludobójstwo czy nie, 06.09.2001.
10. Gazeta Wyborcza: Pamięci pomordowanych Ormian, 30.10.2005.
11. Gazeta Wyborcza: Pamiętają o tragedii Ormian, 24.04.2015.
12. Gazeta Wyborcza: Pierwsze ludobójstwo XX wieku, 24.04.2005.
13. Gazeta Wyborcza: Pierwsze ludobójstwo XX wieku, 24.04.2005.
14. Gazeta Wyborcza: PiS nie zrobi ani kroku wstecz, 31.01.2018.
15. Gazeta Wyborcza: Rocznicą masakry ormian, 25.04.1995.
16. Gazeta Wyborcza: Rocznicą ormiańskich rzezi, 25.04.2005.
17. Gazeta Wyborcza: Rzeź Ormian, 20.04.2015.
18. Gazeta Wyborcza: Trudne słowo na "L", 15.04.2015.
19. Gazeta Wyborcza: Turecko-ormiańskie rozrachunki z historią, 23.09.2005.
20. Gazeta Wyborcza: Uczczono wymordowanych Ormian, 27.04.2015.
21. Gazeta Wyborcza: Upamiętnimy rzeź Ormian, 18.04.2014.
22. Gazeta Wyborcza: Zapomniane Ludobójstwo, 24.04.1998.
23. Polityka: Daleko do Araratu, 21.04.2015.
24. Polityka: Ludobójstwo - trudne słowo, 20.05.2010.
25. Polityka: Rana pamięci, 13.07.2002.
26. Polityka: Rzeź Ormian potępiona przez nielicznych, 12.03.2010.
27. Polityka: Zbrodnia w imię polityki, 26.04.2015.
28. Rzeczpospolita: Czas leczy rany, pamięć zostaje, 22.04.2005.
29. Rzeczpospolita: Kto dziś pamięta o rzezi Ormian? 29.04.1995.
30. Rzeczpospolita: Pamięć o Ormianach, 25.04.2005.
31. Rzeczpospolita: Premier Turcji grozi deportacją 100 tysięcy Ormian, 18.03.2010.
32. Rzeczpospolita: Rzeź Ormian to problem całej ludzkości, 24.04.2015.
33. Rzeczpospolita: Triumf Ormian, 24.04.2015.
34. Rzeczpospolita: Trzeba uznać zbrodnię, 22.04.2005.
35. Rzeczpospolita: Turcjo, przyznaj się, 17.04.2015.
36. Rzeczpospolita: XX wiek: Pierwsze nowożytne ludobójstwo, 05.08.2016.
37. Tygodnik Powszechny: Są ofiary, nie ma winnych, 24.04.2005.

## Польская пресса о Геноциде армян в 1991-2018 гг.

*Генри Матинян*

### Резюме

**Ключевые слова:** армяне, Турция, Польша, Егерн, резня, журнал, признание, осуждение.

В статье представлено комплексное исследование публикаций о Геноциде армян в польской прессе в 1990-2018 гг. Для работы были отобраны польские журналы с самым высоким рейтингом и репутацией. Исследование показывает, что польская пресса сочувствует и солидаризируется со справедливым требованием армянского народа, подчеркивая необходимость признания и осуждения преступления. Во многих статьях польские авторы проводят параллели между трагическими страницами истории армян и поляков, подчеркивая необходимость осуждения подобных преступлений во избежание похожих случаев в будущем. Исследование доказывает, что наряду с политическими и социальными изменениями в Польше, формулировки польской прессы о геноциде имели определенное динамическое развитие. Если в 1990-х годах в основном обсуждалось моральное обязательство признать геноцид, то в 2000-х стали заметны призывы к цивилизованному миру оказать давление на Турцию и заставить ее столкнуться с криминальными страницами собственной истории. Во многих статьях критикуется политика отрицания Турции, а вопрос признания Геноцида другими странами анализируется в контексте международно-политических вопросов. Особенно активные дискуссии ведутся в польской прессе по поводу принятия резолюции об осуждении Геноцида армян Сеймом Польши в 2005 г, затем в 2015 году – в связи со 100-летием Геноцида.

## Polish Press on the Armenian Genocide in 1991-2018

*Henri Matinyan*

### Summary

**Key words:** *the Armenians, Turkey, Poland, Yeghern, massacre, newspaper, recognition, condemnation*

The article provides a comprehensive analysis of the coverage of the Armenian Genocide in the Polish press in 1990-2018. Polish newspapers with the highest rating and reputation were selected for the research. The study illustrates that the Polish press sympathizes with the just demand of the Armenian people, emphasizing the need to recognize and condemn the crime. In many articles, Polish authors draw parallels between the tragic pages in the history of Armenians and Poles, highlighting the need to condemn such crimes in order to avoid similar cases in the future. The framing of the Armenian Genocide has shifted over time in relation to the changing political and social context in Poland. If in the 1990s the moral imperative to recognize the genocide was mainly discussed, then in the 2000s calls for the civilized world to put pressure on Turkey and force it to face the criminal pages of its own history became noticeable. In many articles, the coverage became more critical because of Turkey's policy of denial. Additionally, the issue of recognition of the Genocide by other countries is analyzed in the context of international political issues. Particularly active discussions are being held in the Polish press about the adoption of a resolution condemning the Armenian Genocide by the Sejm of Poland in 2005, then in 2015 in the lead-up to the centennial anniversary of the Armenian Genocide.

Ներկայացվել է 13.04.2023 թ.

Գրախոսվել է 20.04.2023 թ.

Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.